

ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոսի

Գրիգորյան Տարոն Եղիայի

«ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՈՑԵՆ – ՕԼԻԳՈՑԵՆ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԻ
ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՊԼԱՆԿՏՈՆ
ՖՈՐԱՄԻՆԻՖԵՐՆԵՐԻ»

Թեմայով ատենախոսության վերաբերյալ ԻԴ.01.01 – «Ընդհանուր երկրաբանություն» մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գրիգորյան Տարոն Եղիայի ատենախոսությունը նվիրված է Հարավային Հայաստանի Էոցեն – օլիգոցեն նստվածքային ավազանի էվոլյուցիայի, լիթոֆացիալ առանձնահատկությունների, կենսաշերտագրական ստորաբաժանման և պալեոաշխարհագրություն վերակառուցումների ուսումնասիրությանը՝ հիմնված պլանկտոնային ֆորամինիֆերների համալիր ուսումնասիրության վրա: Աշխատանքը վերաբերում է Հայաստանի պալեոգենի շերտագրությանը, միկրոհնէաբանության և նստվածքակուտակման պատմության կարևորագույն/առաջնահերթ խնդիրներից մեկին և իր բովանդակությամբ գտնվում է ժամանակակից տարածաշրջանային երկրաբանական հետազոտությունների **առաջնային ուղղությունների շրջանակում:**

Թեմայի արդիականությունը

Ատենախոսության թեման անկասկած արդիական է: Հարավային Հայաստանի պալեոգենի կտրվածքները վաղուց հայտնի են իրենց շերտագրական ամբողջականությամբ/լրիվությամբ, ֆացիալ բազմազանությամբ և բրածո նյութի հարստությամբ: Դրանց կարգաբանական և կենսաշերտագրական մեկնաբանությունը մինչ այս հիմնված են եղել 1980-ական թվականների տվյալների, ինչպես նաև համեմատորվել են այդ տարիներին կիրառված սանդղակների հետ: Վերջին տասնամյակներում էականորեն վերանայվել են՝ պլանկտոնային ֆորամինիֆերների տաքսոնոմիան, կենսագոնների սահմանման սկզբունքները, գլոբալ շերտագրական համադրության չափորոշիչները և սկզբունքները, երկրաժամանակագրական միավորների /հարկեր, դարեր և այլն/ սահմանների բացարձակ տարիքները և սահմանները որոշող ցուցիչ տեսակները; ինչպես նաև պալեոաշխարհագրական քարտեզները: Ուստի մինչ այժմ հայտնի տվյալները կորցրել են

իրենց արդիականությունը և Հայաստանի պայեռոգենի կտրվածքների ինչպես նաև ֆորամինիֆերների համակցության ուսումնասիրությունը դարձել է առավել քան անհրաժեշտ:

Հարավային Հայաստանը պայեռոգենի ընթացքում գտնվել է Պերի-/Պարաթետիսի եզրային հատվածում, որտեղ համադրվել են տեկտոնական ակտիվությունը, նստվածքակուտակման միջավայրերի արագ փոփոխությունը, հրաբխական ազդեցությունը և ծովային կենսաշխարհի տեղայնացված ու լայնածավալ վերակառուցումները: Այդ պայմաններում պլանկտոնային ֆորամինիֆերները հանդիսանում են շերտերի հասակագրման, կտրվածքների փոխհամադրման և միջավայրային փոփոխությունները ուսումնասիրման ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Հետևաբար թեմայի ընտրությունը գիտականորեն հիմնավորված է, իսկ դրա իրականացումը՝ առավել քան ժամանակին և պահանջված:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակը ձևակերպված է հստակ և տրամաբանորեն բխում է թեմայի արդիականությունից՝ ուսումնասիրել Հարավային Հայաստանի Էոցեն–օլիգոցեն նստվածքային ավազանի էվոլյուցիան և կենսաշերտագրությունը պլանկտոնային ֆորամինիֆերների հիման վրա: Նպատակին հասնելու համար՝ հեղինակի կողմից առաջադրված խնդիրները նույնպես ձևակերպված են ըստ աշխատանքի ներքին տրամաբանության և ընդգրկում են թե՛ լիթոլոգիական ու ֆացիալ, թե՛ միկրոհնէաբանաբանական և շերտագրական բաղադրիչները:

Մասնավորապես, աշխատանքում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝ ուսումնասիրել Հարավային Հայաստանի Էոցեն – ստորին օլիգոցենի նստվածքային ավազանի լիթոլոգիական կազմը և նստվածքակուտակման պատմությունը, վերլուծել պլանկտոնային ֆորամինիֆերների համալիրները, որոշել շերտագրական տեսակների առաջին (FAD) և վերջին (LAD) երևակումները, իրականացնել զոնալ ստորաբաժանում և այն համադրել տարածաշրջանային ու գլոբալ կենսաշերտագրական սանդղակների հետ, ինչպես նաև համադրել ստացված տվյալները այլ միկրոբրածո խմբերի նյութերի հետ: Այդպիսի մոտեցումը թույլ է տվել ստանալ ոչ թե մասնակի, այլ համապարփակ արդյունքներ, ինչպես նաև համեմատել ստացված տվյալները (լայն) տարածաշրջանային և գլոբալ տվյալների սանդղակների հետ:

Աշխատանքի գիտական նորույթը

Ատենախոսության կարևորագույն արժանիքներից մեկը նրա գիտական նորույթն է: Աշխատանքի շրջանակում առաջին անգամ համալիր ձևով վերականգնվել են Հարավային Հայաստանի էոցեն – ստորին օլիգոցենի նստվածքակուտակման պայմանները՝ լիթոլոգիական, ֆացիալ և կառուցվածքային տվյալների փոխկապակցված վերլուծությամբ: Հեղինակը ցույց է տվել նստվածքակուտակման միջավայրերի հաջորդական փոփոխությունը՝ ստորին էոցենի մեղմաթեք ռամպային պայմաններից մինչև միջին–վերին էոցենի ռիֆային համակարգեր և վերին էոցենի լուսավորված շելֆային ծանծաղ միջավայրեր:

Աշխատանքում մշակվել է տարածաշրջանի համար նոր կենսաշերտագրական սխեմա՝ հիմնված պլանկտոն ֆորամինիֆերների համալիրների վրա: Սահմանվել են P12, P14 և P15 կենսազոնաները, ճշգրտվել են E13 և E14 կենսազոնների դիրքերը, ինչպես նաև առաջարկվել են տարածաշրջանային պայմաններին համապատասխան այլընտրանքային մարկերներ (ցուցիչ տեսակները) այն դեպքերի համար, երբ դասական ցուցիչ տեսակը՝ *Hantkenina alabamensis*-ը, բացակայում է: Մասնավորապես, E16–O1 սահմանի համար կիրառվել է *Turborotalia cerroazulensis*-ի վերջին (FAD) առկայությունը, իսկ O1–O2 և O2–O3 սահմանների համար՝ համապատասխանաբար *T. increbescens* և *T. ampliapertura* տեսակների վերջին (FAD) առկայությունները: Այս մոտեցումը զգալի ներդրում է Հայաստանի պալեոգենի ժամանակակից կենսաշերտագրության զարգացման գործում:

Հատուկ պետք է ընդգծել նաև այն հանգամանքը, որ աշխատանքում որոշվել և նկարագրվել են ՀՀ վերին էոցեն – ստորին օլիգոցեն նստվածքներում հայտնաբերված մի շարք պլանկտոնային ֆորամինիֆերների տեսակներ, ինչպես նաև առաջին անգամ կազմվել է դրանց ատլասը: Առանձին դրական գնահատականի է արժանի հեղինակի կողմից առաջարկված նմուշների մշակման պարզեցված և արդյունավետ մեթոդը, որը կարող է կիրառվել հետագա հնէաբանական ուսումնասիրություններում:

Աշխատանքում կիրառված մեթոդները

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը լիովին համապատասխանում է թե՛ ուսումնասիրությունների առաջադրվող պահանջներին, թե՛ առաջադրված խնդիրներին: Հեղինակը համադրել է դաշտային երկրաբանական դիտարկումները, կտրվածքների չափագրումն ու նկարագրությունը, լիթոֆացիալ վերլուծությունը, միկրոհնէաբանական

մշակումը, պլանկտոնային և բենթոսային ֆորամինիֆերների, նանոպլանկտոնի և այլ միկրոբրածոների փոխհամադրությունը, ինչպես նաև լուսային և սկանավորող էլեկտրոնային միկրոսկոպիայի տվյալները:

Բարձր գնահատականի է արժանի հեղինակի կողմից նմուշների մշակման (պլանկտոնային ֆորամինիֆերների խեցիների անջատման) պարզ, արագ և քիչ ծախսատար մեթոդ, որը հիմք է դարձել առաձին գիտական հոդվածի հրատարակման:

Դաշտային աշխատանքները կատարվել են 2015 թվականից սկսած: Ուրցաձոր, Շաղափ, Լանջառ, Ուրցալանջ և Մալիշկա կտրվածքներից վերցվել է շուրջ 400 նմուշ, ինչը առավել քան բավարար և ներկայացուցչական նյութ է նմանատիպ հետազոտության համար: Միայն Ուրցաձորի կտրվածքից պլանկտոնային ֆորամինիֆերների ուսումնասիրման նպատակով վերցվել է 87 նմուշ, իսկ մնացած կտրվածքներից ևս ապահովվել է նյութի անհրաժեշտ ծավալը: Նմուշների ընտրությունը, դրանց մշակման հերթականությունը և միկրոբրածո նյութի ստացման եղանակները նկարագրված են մանրամասն և արտահայտում են հեղինակի գործնական փորձը:

Աշխատանքում կիրառված մեթոդները համարժեք են ստացված արդյունքներին: Հեղինակը ոչ միայն օգտվել է ժամանակակից կարգաբանական և կենսագոնային մոտեցումներից, այլև դրանք հարմարեցրել է ուսումնասիրվող տարածաշրջանի առանձնահատկություններին: Այդ պատճառով մեթոդաբանական մասը կարելի է գնահատել որպես աշխատանքում ներկայացված դրույթների արժանահավատության կարևոր հիմք:

Ատենախոսության մեջ ներառված, չնայած որոշ վրիպումների, բազմաթիվ համապատասխան, բարձր որակի և մանսագիտորեն պատշաճ պատրաստված պատկերները (նկարներ, լուսանկարներ, գծագիր պատկերներ), որոնք էապես նպաստում են կատարված աշխատանքի շարադրված տեքստի ընկալման և բուն աշխատանքի հավաստիության հիմնավորմանը:

Ստացված արդյունքների արժանահավատությունը

Ատենախոսության արդյունքների արժանահավատությունը կասկած չի հարուցում: Առաջին հերթին այն հիմնված է զգալի ծավալի փաստական նյութի վրա՝ բազմամյա դաշտային ուսումնասիրությունների, մանրակրկիտ նմուշարկման և բազմակողմանի լաբորատոր մշակումների արդյունքում: Երկրորդ՝ հեղինակը լայնորեն օգտագործել է ժամանակակից միջազգային գրականությունը, պլանկտոնային ֆորամինիֆերների

ստանդարտ կարգաբանությունը և ընդունված կենսագոնային սխեմաները՝ կատարելով դրանց ճիշտ և գիտականորեն հիմնավորված համադրություն Հայաստանի նյութի հետ:

Աշխատանքի արժանահավատության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ ստացված արդյունքները համադրվել են ոչ միայն պլանկտոնային ֆորամինիֆերների, այլև բենթոսային ֆորամինիֆերների, խոշոր ֆորամինիֆերների, նանոպլանկտոնի և որոշ դեպքերում ռադիոլարիաների տվյալների հետ: Այդպիսի միջդիսցիպլինար համադրումը թույլ է տվել հեղինակի կողմից ավելի ճշգրտությամբ սահմանել կենսաշերտագրական սահմանները և հիմնավորել դրանց շերտագրական դիրքերը տարբեր կտրվածքներում:

Հեղինակի կողմից ստացված արդյունքների գիտական հավաստիությունը հաստատվում է նաև դրանց փորձաքննությամբ և հրապարակումներով: Ատենախոսության հիմքում ընկած նյութերի մի մասը արդեն հրապարակվել է հեղինակավոր գիտական հանդեսներում, ներկայացվել է գիտաժողովներում և մասնագիտական միջավայրում ստացել է քննարկում, ինչը լրացուցիչ վկայում է աշխատանքի արդյունքների ինչպես նաև ատենախոսի գիտական կայացման մասին:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Աշխատանքի գործնական նշանակությունը բազմաբնույթ է: Նախ, առաջարկված կենսաշերտագրական սխեման կարող է կիրառվել Հարավային Հայաստանի և հարակից շրջանների նստվածքային կտրվածքների հասակագրման, փոխհամադրման և քարտեզագրման աշխատանքներում: Սա կարևոր է ոչ միայն ակադեմիական երկրաբանության, այլև կիրառական շերտագրության և այլ երկրաբանան ոլորտների համար:

Երկրորդ, աշխատանքի արդյունքները լրացնում և արդիականացնում են Հայաստանի պալեոգենի վերաբերյալ փաստագրական բազան՝ հնարավորություն տալով տեղական նյութը ներառել միջազգային (նեո և լայն տարածաշրջանային, գլոբալ) համադրական դաշտում: Երրորդ, լիթոֆացիալ վերակառուցումները և նստվածքային ավազանի զարգացման մոդելի հստակեցումը կարող են օգտակար լինել նավթագազային հեռանկարների, հորատման ուղղորդման և ռիսկերի գնահատման տեսանկյունից: Վերջապես, ստացված պատկերավոր և վերլուծական նյութը կարող է կիրառվել բուհական և հետբուհական կրթության գործընթացում:

Հաշվի առնելով, որ սույն աշխատանքը միավորում է գիտական վերլուծությունն ու գործնական առաջարկությունները, վկայում է դրա էական նշանակության մասին թե՛ ակադեմիական, թե՛ հասարակական ոլորտներում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, քննարկումից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 114 էջ է: Այն ներառում է 84 անվանումից բաղկացած գրականություն, 42 նկար և 2 աղյուսակ: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ութ գիտական հոդվածներում, որից 3-ը առաջին համահեղինակությամբ: Դրանց մի մասը հրապարակվել է ՀՀ, իսկ մյուս մասը՝ միջազգային հանդեսներում:

Ներածությունում հիմնավորված են թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացված են հիմնական պաշտպանվող դրույթները, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, կիրառված նյութերն ու մեթոդները, ինչպես նաև աշխատանքի փորձաքննությունը և կառուցվածքը: Ներածությունը շարադրված է համակարգված և ստեղծում է անհրաժեշտ հիմքը հետագա բաժինների ընկալման համար:

Առաջին գլուխը նվիրված է ուսումնասիրվող տարածքի երկրաբանական ուսումնասիրությունների համառոտ ակնարկին: Այստեղ ներկայացված են Հարավային Հայկական բլոկի երկրաբանական կառուցվածքը, ՀՀ պալեոգենի նստվածքային ավազանի ուսումնասիրության պատմությունը, պլանկտոնային ֆորամինիֆերների մորֆոլոգիան, կառուցվածքը, տաքսոնոմիան և կենսաշերտագրական նշանակությունը, ինչպես նաև Հայաստանի հարավային հատվածի պալեոգենի պլանկտոնային ֆորամինիֆերների ուսումնասիրման պատմությունը: Այս գլուխը կարևոր տեսական հիմք է ստեղծում հետագա մասնագիտական վերլուծությունների համար:

Երկրորդ գլուխը վերաբերում է լիթոշերտագրությանը և լիթոֆացիալ վերլուծությանը: Հեղինակը մանրամասն ներկայացնում է Ուրցաձորի, Ծաղափի, Լանջառի, Ուրցալանջի և Մալիշկայի կտրվածքների ուսումնասիրության արդյունքները՝ ցույց տալով դրանց լիթոլոգիական կազմը, ֆացիալ փոխակերպումները, բրածո նյութի առկայությունը և նստվածքակուտակման միջավայրերի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Հատկանշական է ֆացիալ ուսումնասիրությունների համար կատարված նմուշարկումների

և դրանց բովանդակայից նկարագրությունը, որը հիմք հանդիսանում աշխատանքում հետագա հնէամիջավայրային վերլուծության համար:

Երրորդ գլուխը նվիրված է ուսումնասիրված կտրվածքներից պլանկտոնային ֆորամինիֆերների համալիրների, կտրվածքներում նրանց տարածվածության և տեսակային կազմի փոփոխության/զարգացման նկարագրությանը, ինչպես նաև պլանկտոնային ֆորամինիֆերների հիման վրա իրականացված կտրվածքների կենսաշերտագրական ստորաբաժանմանը: Ահա այստեղ հատկապես հստակ արտահայտվում է աշխատանքի գլխավոր գիտական ներդրումը: Հեղինակը տարբեր կտրվածքներում առանձնացրել և ճշգրտել է էոցեն–օլիգոցեն անցման համար կարևոր մի շարք զոնաներ, հիմնավորել է մարկեր տեսակների առաջին (FAD) և վերջին (LAD) երևակումների շերտագրական արժեքը, ինչպես նաև ցույց տվել, որ դասական զոնալ ցուցիչների բացակայության պարագայում կարող են կիրառվել այլընտրանքային՝ տարածաշրջանային պայմաններին համապատասխան չափորոշիչներ: Այս գլուխը աշխատանքի ամենակարևոր մասն է և ծառայում է գիտական հուսալի հիմք հաջորդող վերականգնումների, քննարկումները և եզրակացությունների:

Եզրակացության և քննարկման ենթաբաժիններում հատկապես արժեքավոր են ստորին էոցենի ռամպային միջավայրերից դեպի միջին էոցենի լանջային, ապա միջին–վերին էոցենի կարբոնատային և ռիֆային համակարգեր անցման հիմնավորումները: Լանջառի, Շաղափ և Ուրցալանջի կտրվածքների քննարկումը ցույց է տալիս հեղինակի կարողությունը կապելու լիթոլոգիական տվյալները բրածո նյութի տարածման, ավազանի տեղագրության և տեկտոնական գործոնների հետ: Քննարկման բաժնում հեղինակը համադրում է տարբեր կտրվածքներից ստացված տվյալները, ներկայացնում դրանց շերտագրական և պալեոաշխարհագրական մեկնաբանությունը, ինչպես նաև կապում է դրանք ավելի լայն տարածաշրջանային և գլոբալ իրադարձությունների հետ: Եզրակացությունում ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները, որոնք ամբողջությամբ բխում են նյութի քննությունից և տրամաբանորեն ամփոփում են կատարված հետազոտությունը:

Դիտողություններ և առաջարկություններ

Չնայած ատենախոսության ընդհանուր բարձր գիտական մակարդակին, կնշելի մի քանի դիտողություններ՝

1. Առաջին գլխում ներկայացված գրական ակնարկը, թեև բովանդակային առումով օգտակար է, որոշ տեղերում կարելի էր ավելի խտացված ձևով շարադրել՝ այդ թվում ավելի շեշտված առանձնացնելով հեղինակի սեփական ներդրումը նախորդ ուսումնասիրությունների ֆոնին:

2. Աշխատանքում առկա մեծածավալ փաստական նյութը ամփոփիչ կլրացվեր մեկ ընդհանուր սինթետիկ աղյուսակով կամ ամփոփ սխեմայով, որտեղ ըստ կտրվածքների կներկայացվեին հիմնական գոնաները, ցուցիչ տեսակները և դրանց համադրությունը միջազգային սանդղակների հետ: Հետագա աշխատանքների համար նպատակահարմար կլինի ընդլայնել ուսումնասիրված կտրվածքների տարածական շրջանակը և առավել միասնական սխեմայով ներկայացնել կենսաշերտագրական, լիթոֆացիալ և պալեոգեոգրաֆիական տվյալների փոխկապակցվածությունը: Այդ թվում տարածաշրջանային երկրաբանական ֆորմացիաների համադրությունները, նույնիսկ եթե կենսագոնը մասամբ կամ ամբողջությամբ բացակայում են ինչպես Մայկոպյան նստվածքաշերտերում:

3. Որոշ բաժիններում, հատկապես գործնական նշանակության քննարկման ժամանակ, կարելի էր ավելի հստակ տարբերակել կիրառական արդյունքները և ավելի լայն տեսական-համադրական արժեքը:

4. Նկար 41-ը կլիներ ավելի տեղեկատվական, եթե դրանում նշվեր յուրաքանչյուր ուսումնասիրված կտրվածքի տարածական/ֆացիալ դիրքը:

5. Չնայած որ այս աշխատանքների նպատակից ու խնդիրներից չի բխում, զանկալի լինել, որ հեղինակը քննարկեր ուսումնասիրված կտրվածքներում որոշ գլոբալ կենսագոնաների կամ ցուցիչ տեսակների բազակայությունը կամ որոշ բրածոների ստորին և վերին երևակումների դիախրոն լինելու պահանջները:

Նշված դիտողությունները ինչպես նաև աշխատանքում առկա որոշ խմբագրական վրիպումներ և անհամապատասխանություններ որևէ կերպ չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր բարձր գիտական արժեքը, այլ կարող են դիտվել որպես հետագա հետազոտությունների զարգացման հնարավոր ուղղություններ, ինչպես նաև յուսաբանվել հետագա տպագիր աշխատանքներում :

Եզրակացություն

Գրիգորյան Տարոն Եղիայի «Հարավային Հայաստանի Էոցեն – օլիգոցեն նստվածքային ավազանի էվոլյուցիան և կենսաշերտագրությունը ըստ պլանկտոնային ֆորամինիֆերների» թեմայով ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որում լուծված է տարածաշրջանային շերտագրության, միկրոհնէաբանության և նստվածքաբանական վերակառուցումների համար կարևոր գիտական խնդիրներ: Աշխատանքն առանձնանում է թեմայի արդիականությամբ, մեծ ծավալի փաստական նյութով, կիրառված մեթոդների համարժեքությամբ, գիտական նորույթով և ստացված արդյունքների տեսական ու գործնական նշանակությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները առավել քան հիմնավորված են, շարադրանքը տրամաբանական է, իսկ եզրակացությունները՝ համոզիչ և բխող ներկայացված նյութից: Հեղինակի կողմից հրապարակված աշխատանքները, նրանց անմիջական ընդգրկումը ատենախոսության մեջ և ստացված արդյունքների փորձաքննությունը լրացուցիչ հաստատում են կատարված հետազոտության գիտական հասունությունը:

Ելնելով վերը շարադրվածից՝ գտնում եմ, որ Գրիգորյան Տարոն Եղիայի ներկայացրած ատենախոսությունը **լիովին համապատասխանում է ԻՊ.01.01** – «Ընդհանուր երկրաբանություն» մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող թեկնածուական ատենախոսություններին վերապահված պահանջներին, իսկ դրա հեղինակը **արժանի է** երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝


JURASSICA
Museum-Jardin botanique
2900 Porrentruy
www.jurassica.ch
info@jurassica.ch

Դավիթ Չոհրաբի Վասիլյան

Dr. habil., Dr. rer. nat., կ.գ.թ

5 ապրիլի 2026

